

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է գույքի վարձակալության աճուրդի, որը տեղի կունենա **2023թ. սեպտեմբերի 27-ին, ժամը՝ 12:00-ին** ք.ԵՐԵՎԱՆ, ԶԱՔԻՅԱՆ 10 ՀԱՍՑԵՈՒՄ, հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2023թ. սեպտեմբերի 26-ին, ժամը՝ 13:00-ին

ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ Է ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ

Պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինության ՊՈԱԿ-ներին (այսուհետ՝ Կազմակերպություններ) անհատույց օգտագործման իրավունքով ամրագրված տարածքներ

| Հ/Հ | Լոտի հերթական համարը | Գույքի (լոտի) անվանումը | Հասցե | Հարկը | Մակերեսը /քառ. մետր/ | Իրավունքի տեսակը, գործողության ժամկետը և այլ պայմաններ | Մեկ ամսվա վարձավճարի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ | Նախավճարը /ՀՀ դրամ/ | Մասնակցության վճար /ՀՀ դրամ/ |
|-----|----------------------|---|---------------------------------------|-------|----------------------|--|---|---------------------|------------------------------|
| 1 | 14 | «Երևանի Ա.Գ. Սախարովի անվան հ.69 հիմնական դպրոց» | Երևան, Շենգավիթ Արարատյան 26 | 1-ին | 55.4 | Սննդի կազմակերպման նպատակով (բուֆետ) վարձակալություն, ժամը 8.30-13.30, 1 տարի ժամկետով՝ բացառությամբ հունիս, հուլիս և օգոստոս ամիսների, շաբաթական հինգ օր՝ երկուշաբթիից-ուրբաթ | 37100 | 37100 | 15000 |
| 2 | 15 | «Երևանի Նորիկ Խաչատրյանի անվան հ.113 միջնակարգ դպրոց» | Երևան, Հաղթանակ թաղամաս 6-րդ փողոց 51 | 1-ին | 35.4 | Սննդի կազմակերպման նպատակով (բուֆետ) վարձակալություն, ժամը 8.30-13.3, 1 տարի ժամկետով՝ բացառությամբ հունիս, հուլիս և օգոստոս ամիսների, շաբաթական հինգ օր՝ երկուշաբթիից-ուրբաթ | 21350 | 21350 | 15000 |
| 3 | 16 | «Երևանի Հովհ. Շիրազի անվան հ.169 հիմնական դպրոց» | Երևան, Շենգավիթ, Ալեքսիա 86 | 1-ին | 44,98 | Սննդի կազմակերպման նպատակով (բուֆետ) վարձակալություն, ժամը 9.00-13.00, 1 տարի ժամկետով՝ բացառությամբ հունիս, հուլիս և օգոստոս ամիսների, շաբաթական հինգ օր՝ երկուշաբթիից-ուրբաթ | 20350 | 20350 | 15000 |
| 4 | 17 | «Երևանի Վահագն Դավթյանի անվան հ.37 հիմնական դպրոց» | Երևան, Քանաքեռ ՀԷԿ 14 | 1-ին | 61,8 | Սննդի կազմակերպման նպատակով (բուֆետ) վարձակալություն, ժամը 9.00-13.00, 1 տարի ժամկետով՝ բացառությամբ հունիս, հուլիս և օգոստոս ամիսների, շաբաթական հինգ օր՝ երկուշաբթիից-ուրբաթ | 35800 | 35800 | 15000 |

| | | | | | | | | | |
|---|----|--|----------------------|------|------|--|-------|-------|-------|
| 5 | 18 | «Երևանի հ.179 հիմնական դպրոց» | Երևան, ՀԱԹ Օհանով 72 | 1-ին | 17,1 | Մենդի կազմակերպման նպատակով (բուժետ) վարձակալություն, ժամը 8.30-13.00, 1 տարի ժամկետով՝ բացառությամբ հունիս, հուլիս և օգոստոս ամիսների, շաբաթական հինգ օր՝ երկուշաբթիից-ուրբաթ | 12950 | 12950 | 15000 |
| 6 | 19 | «Երևանի Ղազարոս Աղայանի անվան հ.63 հիմնական դպրոց» | Երևան, Կիկյան 9 | 1-ին | 16.5 | Մենդի կազմակերպման նպատակով (բուժետ) վարձակալություն, ժամը 9.00-12.00, 1 տարի ժամկետով՝ բացառությամբ հունիս, հուլիս և օգոստոս ամիսների, շաբաթական հինգ օր՝ երկուշաբթիից-ուրբաթ | 24650 | 24650 | 15000 |

* Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ **«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):**

* **Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:**

* **Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք լուտերին կարող են ծանոթանալ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ այցելելով վերը նշված հասցեներ:**

Կազմակերպչին պատասխանատվություն չի կրում աճուրդի ներկայացված լուտի (լուտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:

Աճուրդի մասնակցության հայտերի ներկայացնելը և պայմանները՝

* **Գույքի վարձակալության աճուրդին կարող են մասնակցել հայտ ներկայացնողները, որոնք սահմանված ժամկետում Կազմակերպչին են ներկայացրել աճուրդի մասնակցության հայտ (հայտի ձևը ներկայացված է)՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով:**

Աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- նախավճարի վճարումը հաստատող անդորրագիրը (**նշելով մասնակցի անունը և ազգանունը**), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ 900013145272**, ստացող՝ ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե, վճարման նպատակը՝ **աճուրդի նախավճար (նշելով լուտի հերթական համարը)**

- մասնակցության վճարումը հաստատող անդորրագիրը (**նշելով մասնակցի անունը և ազգանունը**), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ 900018002981**, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի մասնակցության վճար**, մասնակցության վճարը գույքի (լուտի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում,

- իրավաբանական անձանց համար՝ գրանցման և հիմնադիր փաստաթղթերի պատճենները, իսկ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,

- հայտատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը):

Աճուրդի մասնակցության հայտերի ներկայացնելը՝

- Աճուրդի մասնակցության հայտերը՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով, ներկայացվում են անձամբ կամ փոստով՝ պատվիրված նամակով:

- Գույքի վարձակալության աճուրդին մասնակցության իրավունք ձեռք բերած սուբյեկտներին (**վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում**) տրամադրում են մասնակցի տոմս, որում նշված համարով հանդես են գալիս աճուրդում:

Գույքի աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակցից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981 հաշվեհամարին:

- Վճարումը հաստատող անդորրագիրը (նշելով վճարման նպատակը)՝ դիտորդի տոմսի վճար) և անձնագրի պատճեն ներկայացնել Կազմակերպչին՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ՝ ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

- Գույքի վարձակալության աճուրդի մասնակցի տոմսերի վաճառքը դադարեցվում է գույքի վարձակալության աճուրդի սկզբից երկու ժամ առաջ, իսկ դիտորդի տոմսերի վաճառքը շարունակվում է ընդհուպ մինչև գույքի վարձակալության աճուրդի սկսվելը:

- Դիտորդի տոմսերի վաճառքը իրականացվում է ք.Երևան, Զաքիյան 10 հասցեում:

- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:

- **Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:**

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- Աճուրդի մասնակցի **անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի** առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև **լիազորությունները հաստատող փաստաթղթերը:**
- Նախքան աճուրդի սկսվելը՝ աճուրդի կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին և յուրաքանչյուր մասնակցին տրամադրում է իրեն տոմսին համապատասխանող քարտ:
- Գույքի վարձակալության աճուրդն անցկացնում է աճուրդավարը, որը հրապարակում է վարձակալության առաջարկվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային վարձավճարի չափը, աճուրդային քայլի չափը, որը սահմանվում է գույքի մեկնարկային վարձավճարի չափի 5 տոկոսից ոչ պակաս չափով:
- Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր տոմսին համապատասխանող համարը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված արժեքով գույքը վարձակալելու մասին:
- Յուրաքանչյուր մասնակից կարող է գույքի՝ իր կողմից առաջարկվող վարձավճարի չափին ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով, կամ քայլի չափից ոչ պակաս գումարով:
- Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն վարձավճարի չափին առաջարկված մեկ թեկնածու, որից հետո աճուրդը դադարեցվում է:

- Գույքի առավելագույն վարձավճարի չափ առաջարկված թեկնածուն աճուրդավարի կողմից երրորդ անգամ առաջարկված վարձավճարի չափը հայտարարվելուց հետո ճանաչվում է աճուրդի հաղթող: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը:

Աճուրդի մասնակցության, նախավճարի վճարման կարգը, ժամկետները և նախավճարի վերադարձման կարգը՝

- Գույքի վարձակալության աճուրդում հաղթող ճանաչված հայտատուի նախավճարը ներառվում է մասնակցի կողմից առաջարկված վարձավճարի մեջ:
- Աճուրդի արդյունքների ամփոփման մասին արձանագրությունն ստորագրելուց հետո կազմակերպիչը գույքի վարձակալության տրամադրման աճուրդում հաղթող ճանաչված անձին տրամադրում է լուրի գնի վճարման հանձնարարագիր՝ հաղթող անձի առաջարկված երեք ամսվա վարձավճարի և նախավճարի տարբերության չափով, որի հիման վրա վերջինս հանձնարարագրով 3 (երեք) **աշխատանքային օրվա ընթացքում** կատարում է վճարում ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվին ու վճարման անդորրագիրը ներկայացնում կազմակերպչին:
- Սահմանված ժամկետներում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից վճարված նախավճարը չի վերադարձվում՝ աճուրդը համարվում է չկայացած, իսկ վճարված նախավճարը կոմիտեի կողմից փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվին: Ընդ որում՝ եթե աճուրդը համարվում է չկայացած՝ հաղթող մասնակցի կողմից վճարումները սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային արձանագրությունը չստորագրվելու պատճառով, ապա այդ դեպքերում հաջորդ աճուրդը կազմակերպվում է նույն պայմաններով՝ առանց մեկնարկային գնի նվազման:

- **Աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպիչը տեղեկություն է տրամադրում Պետական գույքի կառավարման կոմիտե՝ չհաղթած մասնակիցների վճարած նախավճարները վերջիններիս կողմից ներկայացված բանկային հաշվեհամարներին փոխանցելու համար:**

** Աճուրդը չկայանալու դեպքում՝ վարձավճարի մեկնարկային գինը նվազում է մեկնարկային գնի 20 փոկոսի չափով:*

Լրացուցիչ տեղեկություններ սպանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել Կազմակերպչին կամ զանգահարել՝ 010-52-63-32, 043-06-07-16 հեռախոսահամարներով, իսկ աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք նաև այցելել հետևյալ հղումով՝

[https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143151:](https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143151)

Ծանուցում.

ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի N 914-Ն որոշում.

Գույքի վարձակալության աճուրդի պայմանների փոփոխման դեպքում կազմակերպիչն օրենքով սահմանված կարգով պարտավոր է աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ անհապաղ կատարել համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ այն ձևով, ինչպես կատարվել է գույքի վարձակալության աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Թնույլարվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները: Գույքի վարձակալության աճուրդի էական պայմանների փոփոխման դեպքում անհրաժեշտ է կատարել նոր հրապարակային ծանուցում՝ նախկին ծանուցումը չեղյալ հայտարարելով:

Քրեական օրենսգրքի 283 հոդված.

1. Հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացման կարգը խախտելով կամ մեկ այլ անձի հետ անօրինական համաձայնության գալով հրապարակային սակարկության կամ գնումների հաղթող դառնալով, խաբեությամբ կամ ապօրինի այլ եղանակով գույքի սեփականատիրոջը, սակարկություններ, գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսավարող սուբյեկտի, անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին խոչոր չափերի գույքային վնաս պատճառելը՝ պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

2) առանձնապես խոչոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

***Ուլառոուռուուն՝ աճուռուռ ոնթաաառ տեսաձանաառումում է. ոռա օռնանանուռուռնռ ասահոմուու նաատանոմ:**

